այսպիսի անախորժ դրութիւն։ Մի ամուր ձեռք շատ ամուր բռնել է մի բեմական սատանայի օձիքից և, ուղիղ նայելով նրա աչքերին, մէկ մէկ երեսովն է տալիս նրա սաները բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ։ Ընթերցողը ամաչում է Իշխ. Ճավճավաձէի փոխարէն, խղճում է նրան և պատրաստ է խընդրել պ. Վերմիշեանին խնայել խեղճ ծերուկին, բայց պ. Վերմիշեանը լաւ ճանաչելով իւր դիմացինին, ամենայն սառնասրտութեամբ շարունակում է իւր գործը և վերջ ի վերջոյ ձեր աչքերի տակ է ձգում մի բարոյական դիակ։ Այս է պ. Վերմիշեանի գլխոյկի տպաւորութիւնը։

Ցաւալի է, շատ ցաւալի իշխ. Ճավճավաձէների գոյութիւնը երկու հարեան և միմեանց հետ պատմական ամուր կապերով կապուած ազգերի մէջ։ Բայց մենք հայերս, որ միշտ թէ խօսքով և թէ գործով ցոյց ենք տուել մեր անկեղծ համակրանքը դէպի մեր դրացի ազգը, ժողովուրդը, դէպի այդ ազգի ինտելիգենցիան, այնքան թեթևամիտ չենք, որ մի ինչ որ Ճավճավաձէի և սրա արբանեակների նախանձը դէպի մեզ վերագրենք ամբողջ վրաց ինտելիգենցիային։ Մենք գիտենք, որ ատելութեան սերմեր ցանողներն երբէք չեն կարող ոչ մի քիչ թէ շատ խելացի հասարակութեան հաւանութեանն արժանանալ և որովհետև մի պատմական դրացի ազգի նորագոյն ներկայացուցիչ ինտելիգենցիան աւելի բարոյական հիմունքների վրայ է կերթուած, ուստի համոզուած ենք, որ հէնց նա իսկ բարոյապէս կը պատժի իւր անարժան հայրենակիցներին։ Մեզ, հայերիս համար Ճավճավաձէների թշնամութիւնը մոծակի կծոցի չափ էլ ոյժ չունի և այս տողերը, որ մենք համաձայնուեցինք գրել, ինքն ըստ ինքեան մեծ վարձ են այդ տեսակ ոչնչութիւնների համար...

Շ.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Ռ. Ց. Պէրպէրեան. խոհք և յուշք. 1903. Վիեննա 1904.

Պրոֆ. Հոլդէր Պեսերսըն, Նպաստ մը Հայ. լեզուի պատմութեան. թարգմ. Հ. Գարեգին Գարանֆիլեան, Վիեննա 1904.

Ա. Տ.—Պ. Ակնարկ հայ բանահիւսութեան վրա. Ս. Պ. Բ. 1904

Գ. Անանեան. Կորածներ. պիես 5 գործ. Թիֆլիս 1904

Մեսրոպ վ. Օտար փունջեր. Ա. հիւսք. Շիլլերից. Դաւրէժ 1904 թ.

Ս. Ծոցիկեան. Տարածուած սխտը. Բագու 1904.

Մկրտիչ Պէշիկթաշլեանի քերթուածներն ու ճաւերը, ծան հրատ. Արշակ Զօպանեան. Փարիզ 1904.

Բժ. ուս. Գ. Մաղաքեան. բժշկականութիւն և հատարակութիւն. Թիֆլիզ 1904

Վ. Փափազեան. Պայտառի հոգին և անկեղծ ընծայ. Թիֆլիզ 1904.

Ա. Ահարոնեան. Կեանքի դասը. բ. տպ. Թիֆլիզ 1904.

Մ. Գօրկիյ. Դանկօի սիրտը, թարգմ. Գ. Անանեան, Թիֆլիս 1904.

Բժ. Ա. Բուդուղեան. Գոյութեան կռիւ. Ս Պ. Բ. 1904.

Х. А. Вермишевъ, Матеріалы для исторіи грузино—армянскихъ отношеніи. отвѣтъ на книжку И. Чавчавадзе „Арм. ученые и воп. камни" С. П. Б. 1904.

Ե. Մանանդեան, Դաւիթ անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ. Վաղարշապատ 1904.

Արսէն վ. Ղլտճեան, Ամուսնութիւն, ամուսնալծութիւն և քաղաքացիական պսակ, Ալէքս. 1904.

Խաչ. Բաբայեան, բանաստեղծութիւններ. Ա. հ. Թիֆլիս 1904,

Ե. Սուրխաթեան. Փարոսի վրա. Ս. Պ Բ. 1904.

Նոյն. Մելքոն աղային սթռուխան. Ն. Նախիջ. բարբառով, Բագու 1903.

Նոյն. Մելքոն աղային վերջաբանութիւնը (Ղրիմի բար.) Ս. Պ. Բ. 1904.

Գեօթէ. Հերման և Դորոթէա. գերմ. թարգ Ցար. Պետրոսեան. Վաղարշ. 1904.

Դուտու Մէզրէլի Անմեղ զոհ, վրաց. թարգմ. Ղ. Կ. Թիֆլիս 1904.

Ցար. Եսայեան. Արբեցողի զատիկը. Թիֆլիս 1904.

Սիմ. Բաբիեան, Բանաստեղծութիւններ. Ս. Պ. Բ. 1904։

Каталогъ газетъ и журналовъ на 1904 г. изд. конт. объявл. „Герольдъ".

Die Beziehungen der Armenischen kirche zu den Syrischen bis zum ende des 6 Iahrhunderts Leipzig 1904.

Ֆ. Նիկ. Ֆինկ. Ցուցակ Տփխիսեցի Արզար Յովհաննիսեանի հայ ձեռագրերի. Լայպցիգ 1903.